Կազմված է «____»___ 2012թ.
Բաղկացած է 8 թերթից

Հաստատված է

ՀՀ արդարադատության նախարարի

02. օգոստոսի 2012թ.

N 145-Ա հրամանով

տնօրեն Թ. Խալաֆյան

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ ------

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
«16» 07. .2007թ.
գրանցման համար 273.210.04629
վկայական՝ 03Ա 076684
հարկ վճարողի հաշվառման համարը
01560755
16.07.2007թ. գրանցված կանոնադրության
թիվ_01..2___ փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
տարածքային բաժնի կողմից

«_____»_____

Տ/Բ պ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նոր խմբագրություն

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունը՝ «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» (այսուհետ՝ Կենտրոն) պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է մասնագիտական կրթական ծրագրեր և արտադպրոցական դաստիարակություն իրականացնելու նպատակով:
Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:
2. Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:
4. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կենտրոնը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար, իսկ հիմնադիրը պատասխանատվություն է կրում միայն մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ նրա ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:
6. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք և խորհրդանշան: Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:
7. Կազմակերպության անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
հայերեն կրճատ՝ «ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ռուսերեն լրիվ՝ "СПЕЦИАЛЬНЫЙ ТВОРЧЕСКИЙ ЦЕНТР НЕСОВЕРШЕНАЛЕТНЫХ ПРОВОНАРУШИТЕЛЕЙ" государственная некоммерческая организация
ռուսերեն կրճատ՝ "СПЕЦИАЛЬНЫЙ ТВОРЧЕСКИЙ ЦЕНТР НЕСОВЕРШЕНАЛЕТНЫХ ПРОВОНАРУШИТЕЛЕЙ" ГНО
անգլերեն լրիվ՝ "THE SPECIAL CREATIVE CENTER FOR OFFENSES TEENAGERS" non commercial state organization
անգլերեն կրճատ՝ "THE SPECIAL CREATIVE CENTER FOR OFFENSES TEENAGERS" NCSO
8. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք, Երևան, Մովսես Խորենացու 162ա:
9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվներ՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:
Կազմակերպության բոլոր եկամուտներն ու ծախսերը նախատեսվում և օգտագործվում են տարեկան նախահաշվին համապատասխան:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

10. Կենտրոնի գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

ա) իրավախախտում կատարած անչափահասների համար հատուկ հաստատություններում և դրանցից դուրս մշակութային մասնագիտությունների ուսուցման կազմակերպումն է, ազգային ու համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը.
բ) անհատի մասնագիտական կրթության, նրա հոգևոր ու ֆիզիկական զարգացման պահանջմունքների բավարարումը.
գ) երեխաների համար գեղագիտական կրթական ծրագրերի իրականացումը.
դ) արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը:
11. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն հանգստի ու զվարճությունների կազմակերպման, մշակույթի և սպորտի բնագավառներում՝ մատուցելով հետևյալ ծառայությունները՝
ա) պատանի հանդիսատեսի և մանկական թատրոնների ներկայացումների ցուցադրում.
բ) ցուցահանդեսների կազմակերպում և իրագործում.
գ) ինքնագործ նկարիչների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և իրագործում.
դ) զարդա-կիրառական արվեստի վարպետների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և իրագործում.
ե) սիրողական ակումբների և ստուդիաների անդամների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և իրագործում.
զ) ժողովրդական ստեղծագործության ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում և իրագործում.
բ) հրատարակչական գործ:
12. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթը (միջոցները) օգտագործվում է կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:
Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

49. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
50. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին, և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
51. Հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:
52. Կազմակերպության սեփականության պահպանության հոգսը կրում է Կազմակերպությունը.
53. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
54. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:
55. Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:
56. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:
Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնելու վարձակալության:
Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն է:

57. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը չի կարող հիմք հանդիսանալ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարացնելու կամ փոփոխելու համար:
58. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

24. Կազմակերպության կառավարումը իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը:
25. Կազմակերպության հիմնադիրը՝
ա) հիմնադրում է Կազմակերպությունը.
բ) սահմանում է Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.
գ) վերակազմակերպում կամ լուծարում Կազմակերպությունը.
դ) լուծում է օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:
26. Լիազորված պետական մարմինը՝
ա) հաստատում է Կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ.
բ) սահմանում է Կազմակերպության կառավարման համակարգը,
գ) հաստատում է Կազմակերպությանը՝ սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը.
դ) նշանակում է Կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը.
ե) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
զ) իրականացնում է Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը.
է) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
ը) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննարկում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.
թ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.
ժ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նոր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
ժա) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և հաշվեկշիռը.
ժբ) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
27. Կազմակերպության տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն), որին աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է լիազորված պետական մարմինը, իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը:
28. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
29. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
30. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.
բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և պետական լիազորված մարմնի որոշումներով ու Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.
գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
դ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ, այդ թվում՝ տարադրամային.
զ) կատարում է աշխատանքների բաշխում իր տեղակալների միջև.
է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
թ) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացման համար.
ժ) վերահսկողություն է իրականացնում ուսուցման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման համար.
ժա) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը.
ժբ) հաստատում է Կազմակերպության մասնաճյուղերի կանոնադրությունը.
ժգ) նշանակում է Կազմակերպության մասնաճյուղի ղեկավարին, նրան տալիս է համապատասխան լիազորագրեր.
ժդ) սահմանված կարգով տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում պետական կառավարման լիազորված մարմնին.
ժե) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:
31. Տնօրենի բացակայության դեպքում լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորությունները իրականացնում է տնօրենի տեղակալներից մեկը:
32. Կենտրոնի խորհրդակցական մարմինը Կենտրոնի տնօրինական խորհուրդն է (այսուհետ՝ Տնօրինական խորհուրդ):
33. Տնօրինական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են տնօրենի տեղակալները, գլխավոր հաշվապահը, բաժնի վարիչները:
Տնօրինական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել կենտրոնի այլ աշխատողներ, կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնագետներ:
34. Տնօրինական խորհրդի նախագահը տնօրենն է:
35. Տնօրինական խորհուրդը՝
ա) տնօրենին ներկայացնում է առաջարկություններ հաստատության գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.
բ) քննարկում է Կենտրոնի զարգացման ծրագիրը, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը և դրա կատարման տարեվերջյան արդյունքները.
գ) քննարկում է Կենտրոնի ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի նախագծերը և առաջարկություններ ներկայացնում տնօրենին.
դ) հաստատում է իր աշխատակարգը.
ե) ընտրում է Տնօրինական խորհրդի նախագահի տեղակալին և քարտուղարին.

զ) տնօրենին ներկայացնում է առաջարկություններ տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ.
է) քննարկում է Կենտրոնի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը և առաջարկություններ ներկայացնում տնօրենին.
ը) քննարկում է տնօրենի, նրա տեղակալների հաղորդումները, մյուս աշխատողների հաշվետվություններն ու հաղորդումները և առաջարկություններ ներկայացնում տնօրենին.
թ) քննարկում և տնօրենին ներկայացնում առաջարկություններ Կենտրոնի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ.
ժ) քննարկում է Կենտրոնի աշխատողների ատեստավորման արդյունքները և առաջարկություններ ներկայացնում տնօրենին.
ժա) իրականացնում սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
36. Տնօրինական խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի նախագահի կողմից սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև անդամների 1/3 պահանջով: Տնօրինական խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանված ժամկետում և կարգով:
37. Սովորողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, մեթոդական աշխատանքների, ուսուցիչների մանկավարժական վարպետության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով կենտրոնում սահմանված կարգով ստեղծվում են ուսումնամեթոդական, մանկավարժական խորհուրդներ:
38. Կենտրոնում գործավարությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
39. Կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության, նրա կանոնադրության պահանջների կատարման, կրթական ու ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

V. ԿԵՆՏՐՈՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Կենտրոնի ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակից բաղկացած ուսումնական տարով: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում անց է կացվում ստուգարք:
14. Կենտրոնի ուսումնական գործունեությունը կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական գործընթացի ժամանակացույցով և դասացուցակներով:
Կենտրոնը մշակում է իր ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, դրանք համաձայնեցնելով պետական լիազորված մարմնի հետ:
15. Կենտրոնում ուսուցումը կարող է կազմակերպվել միայն առկա ուսուցման ձևով:
16. Ուսումնական կրթական ծրագերի առավել արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ սովորողների համար ստեղծում է ուսումնառության համար անհրաժեշտ պայմաններ:
17. Կենտրոնում ուսումնական պարապմունքները իրականացվում են խմբերով և անհատական ուսուցման հետևյալ ձևերով՝ դաս, գործնական աշխատանք, ստուգողական աշխատանք, խորհրդատվություն, անհատական աշխատանք:
Կենտրոնը կարող է կիրառել ուսումնական պարապմունքների այլ ձևեր (էքսկուրսիա, դերային խաղերի դաս, համերգ, ցուցահանդեսներ, ներկայացումներ, տնային աշխատանք և այլն):
Դասարանային պարապմունքների բոլոր ձևերի համար սահմանվում է ակադեմիական ժամ 40 րոպե տևողությամբ, զույգ ժամերի միանվագ վարման դեպքում՝ 80 րոպե:
18. Սովորողների համար արձակուրդները սահմանվում են կրթության պետական լիազորված մարմնի կողմից հաստատված ժամանակացույցով և կարգով:
19. Ուսումնական ծրագիրը ավարտածներին տրվում է համապատասխան վկայական: Տվյալ կրթական ծրագիրը չավարտածներին տրվում է համապատասխան տեղեկանք:

20. Ուսումնական պլանի, առարկայական ծրագրի բոլոր պահանջները կատարած սովորողներին թույլատրվում է մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը և քննություններին, և արդյունքների հիման վրա տրվում է համապատասխան վկայական:
21. Կենտրոնում ուսումնական խմբում սովորողների թիվը սահմանվում է 5-8 աշակերտ, եթե տվյալ մասնագիտության ուսումնական պլանով այլ թիվ նախատեսված չէ:
22. Կենտրոնը ուսումնական գործընթացը կազմակերպում է իրավախախտ անչափահասների հատուկ հաստատություններում կամ հիմնարկներում՝ դրանց և Կենտրոնի միջև կնքված պայմանագրերի հիման վրա:

Կենտրոնի սովորողների արտադրական կամ ստեղծագործական պրակտիկան, որպես կանոն, անցկացվում է կազմակերպություններում, հիմնարկներում՝ դրանց և Կենտրոնի միջև կնքված պայմանագրերի հիման վրա:
23. Կենտրոնը միջոցներ է ձեռնարկում սովորողների ինքնազարգացման, առողջության պահպանման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման համար:

VI. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

40. Կենտրոնի աշխատողները իրավունք ունեն՝
ա) կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու Կենտրոնի կառավարմանը.
բ) ընտրելու և օգտագործելու կրթական գործընթացը ապահովելու համար անհրաժեշտ ուսուցման ու դաստիարակության մեթոդիկաներ, ուսումնական ձեռնարկներ և նյութեր, գնահատման մեթոդներ (մանկավարժական աշխատողները).
գ) սահմանված կարգով օգտվելու Կենտրոնի տեղեկատվական ֆոնդերից, ուսումնական և այլ ծառայություններից, տեխնիկական հնարավորություններից.
դ) ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բողոքարկելու Կենտրոնի ղեկավարության հրամանները (կարգադրությունները): Աշխատողն ունի նաև ՀՀ օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրով, հաստատության կանոնադրությամբ չարգելված այլ իրավունքներ:
41. Կենտրոնի աշխատողը պարտավոր է.
ա) կատարել Կենտրոնի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.
բ) բարեխղճորեն կատարել իր աշխատանքային պարտականությունները.
գ) ապահովել իր գործունեության պատշաճ մասնագիտական մակարդակը:
42. Կենտրոնի թափուր մանկավարժական աշխատատեղի համար խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել մրցութային ընտրություն:
43. Կենտրոնի մանկավարժները և այլ աշխատողներ իրենց մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման նպատակով սահմանված կարգով պարբերաբար վերապատրաստվում են: Տնօրենը պատասխանատվություն է կրում մանկավարժների և այլ աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման համար:

VII.ԿԵՆՏՐՈՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

44. Կենտրոնի սովորողի իրավունքներն ու պարտականությունները որոշվում են Կենտրոնի կանոնադրությամբ, ներքին կարգապահության կանոններով:
45. Կենտրոնի սովորողն իրավունք ունի՝
ա) անվճար օգտվելու Կենտրոնի գրադարանից, տեխնիկական միջոցներից.
բ) մասնակցելու Կենտրոնի կարևորագույն հարցերի քննարկմանն ու լուծմանը:
46. Կենտրոնի սովորողը պարտավոր է՝
ա) կատարել Կենտրոնի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.
բ) խնամքով վերաբերվել Կենտրոնի գույքին.
գ) հարգել աշխատողների և սովորողների իրավունքներն ու արժանապատվությունը.
դ) կատարել մասնագիտական կրթության պահանջները:

47. Սովորողների համար Կենտրոնի կողմից սահմանվում են նյութական ու բարոյական խրախուսման ձևեր:
48. Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պահանջները չկատարելու, Կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները, ներքին կարգապահական կանոնները խախտելու համար սովորողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական ներգործության միջոցներ՝ ընդհուպ Կենտրոնից հեռացումը:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

59. Կազմակերպության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:
60. Կազմակերպությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և լրացուցիչ աղբյուրներից:
61. Կազմակերպության լրացուցիչ ֆինանսական աղբյուրներն են՝
ա) բարեգործական, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
բ) Կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
62. Կազմակերպությունն իր միջոցների հաշվին աշխատողների աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել հավելումներ:
63. Կազմակերպությունը ֆինանսական գործունեության մասին սահմանված կարգով ներկայացնում է հաշվետվություն լիազորված պետական մարմնին:
64. Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:
65. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից:

IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

66. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
67. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոսանոց պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի: Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
68. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
69. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:
70. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
71. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
72. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: